ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 22-Ա

«16» փետրվարի 2024 թվականի

գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 9-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին.

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը սահմանելու մասին» թիվ 9-Ա որոշման հավելվածի 15-րդ կետից հետո լրացնել 16-րդ և 17-րդ կետերը.

«16. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Աղվորիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրը՝ Ամասիա համայնք Աղվորիկ բնակավայր 5-րդ փողոց, շենք 1,

17. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Զորակերտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրը՝ Ամասիա համայնք Զորակերտ բնակավայր 1-ին փողոց, շենք 3:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Մարդոյան Գ.
Ջաքարյան Հ.
Աբրահամյան Ն.
Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.
Մարտիրոսյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«16» փետրվարի 2024 թվական
գյուղ Ամասիա